



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

13052-13056

891-99

LS-19

835

78 pages

1. - Wm. Lewis Jones of mts. Wm. Lewis Jones

2. - Wm. Lewis Jones

3. - Wm. Lewis Jones

4. - Wm. Lewis Jones

5. - Wm. Lewis Jones

Wm. Lewis Jones

ԱԶԳԱՅԻՆ ԼՍԱՐԱՆ

Յ՛ՕՐԹԱՔԷՅՅ

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ա.

29 ՅՈՒՆՈՒԱՐ 1873

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ՆԵՐԿԱՅ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՍ
ՀԱՅ ԽԶԳԻՆ ՎՐԱՅ ԸՐԱԾ ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ

ՏՕՔԹԷՕՒ Յ. ՇԻՇՄԱՆՆԱՆԷ

Supplément

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԳԱՎԱՅԵԱՆ

— 1873 —

9 (47.925)

Ա.ԶԳ.Ա.ՅԻՆ ԼՍԱՐԱՆ

ՅՕՐԹ Ա.ԳԷՕՅ

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻԻՆ Ա.

29 ՅՈՒՆՈՒԱՐ 1873




ԵՒՐՈՊԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՆԵՐԿԱՅ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ՀԱՅ ԱԶԳԻՆ ՎՐԱՅ ԸՐԱԾ ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ

ՏՕՔԹԻՈՒ Յ. ՇԻՇՄԱՆԵԱՆԷ



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՍԵՓԱՅ ԳԱՎԱՅԵԱՆ

— 1873 —

13497

U.S. DEPT. OF AGRICULTURE

SOILS

U.S. DEPARTMENT OF AGRICULTURE

SOILS

U.S. DEPARTMENT OF AGRICULTURE
SOILS

U.S. DEPARTMENT OF AGRICULTURE



1469-2003

Տիկնայք և Տեարք

Ազգային Լսարանի Մասնաժողովը երախտագիտութեամբ կ'ողջունէ Ձեր ներկայութիւնը, Լսարանի հաստատութեան առաջին երեկոյթին մէջ: Ներեցէք որ Մասնաժողովս իր շնորհակալութիւնները յայտնելէ ետեւ համառօտ տեղեկութեամբ մը ծանուցանէ Ձեզ թէ ի՞նչ է այս հաստատութեան նպատակը: Արդէն Լսարանի անունը մեր մէջ արտասանուիլ սկսած օրէն ՚ի վեր, ամեն մարդ իւր ուղած նշանակութիւնը տուեր է անոր: Այս տեսակ հաստատութեանց նպատակը հասարակաց կրթութեան ծաւալման համար ըլլալը ամենուն ծանօթ է, բայց անոր պարագաները ամենքը մի և նոյն կերպով չեն ըմբռներ: Ըսել կ'ուզեմ թէ՛ այս տեսակ բառերը մեր ազգին եկամուտ են, և ամենայն ոք իր կարծեացը համեմատ կ'ուզէ մեկնել:

Լսարանները՝ որ Եւրոպայի, Ամերիկայի մէջ ժամանակէ մ'ի վեր ազգաց կրթութեան գլխաւոր տարրերէն մէկն համարուած են, ոմանք կը շփոթեն խօսակցի նշանակութեանը հետ: Խօսարանները՝ ուր ժողովուրդը կ'երթայ գլխաւորաբար ժամանակին քաղաքական կարեւոր խնդրոց վրայ խօսելու, և վիճելու, սովորաբար Գաղղիոյ և Գերմանիոյ մէջ յեղափոխութեանց միջոցին ծագումն առած են, և խաղաղութեան մէջ

ասոնց առած կերպարանքը Լսարաններն են : Ո՛ւր հմուտ անձինք ուսմանց և գիտութեանց վրայօք իրենց կարծիքները կը հաղորդեն ժողովուրդը լուսաւորելու համար : Եւ եթէ ատենախօսութեանց մէջ հասարակաց կարծեաց հակառակ բան մը գտնուի , օրինաւոր հրապարակական քննադատութեանց միայն ենթակայ կ'ըլլան առանց հանգիստականք իրաւունք ունենալու հոն ատենախօսին պատասխանել :

Մեր ազգին մէջ ալ այս բարի սովորութիւնը սկսած է տարածուիլ , և հաստատուիլ . մենք չենք ուզեր քննադատել միւս թաղերուն մէջ գտնուած Լսարաններու գրութիւնը , որովհետեւ ամենուն ալ նպատակը միշտ ազգը յառաջադիմութեան մէջ մղել է . նպատակնիս միայն Լսարաններու գրութիւնը մեկնելով մեր գրութիւնը հասկցնել է : Ուրեմն երկար ժամանակէ 'ի վեր մեր թաղին հասարակութիւնը կը փափաքէր այսպիսի հաստատութիւն մ'ունենալ , այսինքն կատարեալ ազգային Լսարան մը հաստատել թաղին մէջ . ահա 'ի գործ կը դրուի այն նըպատակը , որ պատիւ ունեցայ մեկնելու : Մասնաժողով մը կազմուած է՝ որուն պաշտօնն է Լրսարանի տեղը և ատենախօսները որոշել . ուստի ժողովրդեան մէջէն այն անձինք՝ որք կը փափաքին ատենախօսել , Մասնաժողովս պատրաստ է զանոնք ամենայն սիրով ընդունելու , եթէ բարեհաճին իրենց գիտաւորութիւնը օր յառաջ Մասնաժողովոյս հաղորդել : Եւ ահա առաջին անգամուան համար Տօքթօր Շիշմանեան էֆէնտին բարեհաճեցաւ ատենախօսել : Արդէն ինքը

իւր բաղմարդիւն գրութիւններովն և գործքերովն ազգային յառաջադիմութեան մատուցած մեծ ծառայութեանց համար, հասարակաց համակրութեանը արժանացած անձանց մէկն ըլլալով, հարկ չի կայ ուրիշ յանձնարարութեան զինքը պատուարժան հանդիսականացդ ներկայացներու համար :

ՏԻԳՐԱՆ ԵՈՒՍՈՒՖԵԱՆ



Տեարք և Տիկնայք

Թէպէտ Մեծապատիւ Եռսուֆեան Տիգրան էֆէնտին մեր նպատակը իմացուց, բայց ինծի ալ պէտք է քանի մը խօսք յառաջաբան ընել և խնդրել ձեր ներողամտութիւնը նախ՝ մեր լեզուին, որ թերեւս նոյն ճշդութիւնը առած չ'ըլլալով բառերու մէջ, շատ անգամ զիս պիտի պարտաւորէ բառ գործածելու, որ հասարակաց սովորութեանց հետ համաձայն չ'երթայ. նոյնպէս իմաստներուն համար ալ կրնայ ըլլալ, որ կարծեաց տարբերութիւններու հանդիպինք, մանաւանդ երբ խօսող մը իրեն պարտականութիւն ստանձնեալ կարծէ ճշմարտութիւնը: Խօսողը շատ անգամ լեզուի մասին տաճկերէն և գաղղիարէն բառերու պիտի հանդիպի մինչեւ օրը գայ, որ աշխարհաբար գործածական լեզուն, ըլլայ կատարեալ լեզու մը՝ որովհետեւ շատեր կան, որ կը հաւատան և ես անոնցմէ եմ թէ գրաբարը իր ժամանակը անցուցեր է և իր սահմանափակութիւնն ունի:

Իմ այս օրուան խօսակցութեանս նիւթը Եւրոպական Ֆաղաքականութեան մեր ազգին վրայ ըրած ազդեցութեանը վրայ պիտի ըլլայ, այս դարուս սկիզբէն մինչեւ այս օրս. կը տեսնենք թէ խնդիրը մեծ է: - Նախ ֆաղաքականութիւնը ինչ է. հարցմունք մի է, որ ըստ իմ կարծեաց պարզ պատասխան մը ունի, և է մարդկային ազգին զանազան ճիւղերու մէջ ըրած յառաջադիմութիւնն, թէ մարդս ինչ ճամբայ քալեց դէպի

լաւը մինչեւ հիմայ, և թէ դեռ ի՞նչ չափ պիտի քալէ : Ես երբ իմ տղայութենէս մինչեւ այսօր տեսածներս յիշեմ և բաղդատեմ, մեծ տարբերութիւն դէպ ի լաւը կը տեսնեմ, և խրամատ մը կը նշմարեմ այն ատենուան և հիմկու գիճակին վրայ՝ և կ'ըսեմ թէ քաղաքականացեալ է :

Հին Հայը իւր հայրենի երկրին մէջ քաղաքականութիւն մը ունեցեր է . իր լեզուն, իր պատմութիւնը, իր վիմագիր արձանագրութիւնքը, իր աւանդութիւնքը, իր դիցաբանութիւնը, իր աւերակները, և մինչեւ իր անտառներուն հատնիլը, աչալուրջ ճամբորդին կը վկայէն թէ այս ազգը հին քաղաքականութիւն մը ունեցեր է . և այս ամեն բառերով յունական պատմութեան տեղեակ օտարը դեռ նոր կը համոզուի թէ՛ հին ազգ մը կայ եղեր, թէ քաղաքականութիւն մը ունի եղեր : Քաղաքականութիւնք կը տարբերին տեղով և ժամանակով . ուրիշ քաղաքականութիւն մը կայ Չինաստան, ուրիշ մը Անգղիայ, նոյնպէս ուրիշ քաղաքականութիւն մը Հայն ալ ունեցեր է ժամանակին : Աւելորդ է յիշել թէ, Արտաշատու յատակագիծը Անիիւրոզ մը հաներ է, աւելորդ է յիշել թէ, իր թագաւորներէն անպիտան մը ողբերգութիւններ կը շարագրէ եղեր, աւելորդ է նաեւ յիշել թէ, վանայ բեւեռագիրները հին քաղաքականութեան մը վկայներն են, վասն զի մենք մեր մօտակայ ժամանակաց վրայ պիտի խօսինք . թողունք ուրեմն հիները՝ խօսինք ներկային վրայ :

Թէ որ մեր վրայ Եւրոպական քաղաքականութիւնը մեծ և արագ ազդեցութիւն մը չէ ը-

րած , մեծ պատճառը ան կը համարուի որ Հայր
կրօնական ժողովուրդ մը ըլլալով՝ կրօնական տար-
բերութիւնք մեծ խտրոց մը ձգած են մեր և ա-
նոնց մէջ , որ քաղաքականութեան գործիքներն
էին : Յանցանքը մե՞րն է , չեմ՝ կարծեր , իրենք
են յանցաւորը և ժամանակն է մանաւանդ , որ
Ասիական գրեթէ միմիայն ֆրիստոնեայ ազգը
խրտեցուցած են , և պատճառը ան է , որ իրենք
յառաջագէմներ՝ մեր վրայ ամեն տեղեկութիւն
իրենց քարոզիչներէն սուած են , և սխալ գա-
զափարներ , սխալ տեղեկութիւնք , իրենց քով
ճշմարտութեանց զօրութիւն ունեցեր են :

Եւ ի՞նչ զարմանք , միթէ այսօր երբ ուղիղ
դատողութեանց դարու մէջ կ'ապրինք , սխալ
խորհրդածութիւնք յայտնի չե՞ն քարոզուիր ա-
մեն օր և որ պատմութիւնը կը ստէ , զոր օրի-
նակ , ի՞նչ է այդ թեթեւ խօսքը թէ «Մահմե-
տականութիւնը քաղաքականութեան հետ չի յար-
մարիր» . միթէ Արաբացիք քաղաքականութիւն
մը չ'ունեցա՞ն որ Եւրոպիոյ ըյս կը մատակա-
րէր երբեմն . բայց ճշմարտութիւնը խարդա-
խել նաեւ պատմութեան վկայութեան դէմ կրօ-
նամոլութեան սովորութիւնն է : Եւ անոնք որ
Եւրոպայէն առաջին անգամ Ասիա ոտք կը կո-
խէին՝ փիլիսոփաներ և գիտուններ չէին , այլ
Աստուածաբաններ և քարոզիչներ (Միսիոնար-
ներ) անտէր , և կրօնական ժողովուրդ մը տես-
նելով՝ իրենց քաջագործութիւնը լաւ ասպա-
րէզ մը կը կարծէին գանել , և պատմական ճշ-
մարտութիւնք փնտռելու կարող չ'ըլլալով , աստ-
ուածաբանական խնդիրներ՝ որ շատ նախապա-

չարմունք կը պարտիակէ, կը յարուցանէին և կը-
րօնական վէճեր և բաժանմունքներ կ'ստեղծէին
ինկած ժողովրդեան մը մարմնոյն մէջ, և փոխա-
նակ օգտի վնաս բերելով շատ անգամ ատելու-
թիւն կը ժառանգէին : Եւ այդպէս մարդկանց
Եզդուիթներու և Քարուշիններու Եւրոպիոյ տուած
տեղեկութիւնքը, որ շահերու և քմաց կը ծառա-
յէին, արդար և ճիշդ չէին կրնար ըլլալ : Հա-
ղորդակցութեան միջոցներ այն ատեն շատ դժ-
ուար ըլլալով՝ աշխարհական մարդիկ, վաճառա-
կաններ, շատ քիչ էին . ժամանակին Տիբլումաթ-
ները մեծաւ մասամբ տգէտ՝ իրենց եկեղեցա-
կանաց գործիք և զէնք էին, անկարողք առանց
անոնց ձեռնտուութեան : Ըսածներուս ճշմար-
տութեան վկայ և ապացոյց՝ Մարիուս Թովենին
Երկաթեայ դիմակ գիրքն է Աւետիք Պատրիար-
քին վրայ, ուր մարդը կը բռնեն՝ կը գողնան՝ կը
բանտարկեն՝ իր կրօնքէն կ'ուրացնեն՝ կը լատի-
նացնեն բռնութեամբ . և դեսպանը որ աս գոր-
ծերը կ'ընէ եկեղեցականաց թելադրութեամբ,
ինք կը վկայէ թէ գործիք մը եղած է երբ կ'ըսէ,
թէ « Հայր Պրոքոնիէի խորհրդով Աւետիք Պատ-
րիարքին համար բրածներս խղճմտանքիս վրայ
քարի պէս կը ծանրանան » :

Յայտնի է թէ այսպիսի Տիբլումաթներ չէ-
ին կրնար Հայուն քաղաքականութիւն մատա-
կարարել, երբ իրենք կրօնամոլութեան խաղա-
լիքներն էին : Շատտեն՝ որ աս կարգէն դուրս
մարդ մ'էր գոհարներու վաճառական, Պարսկաս-
տան կ'երթար, և իր ճամբորդութիւնքը գրած
է : Անշուք, անզարդ, կողոպտած Էջմիածին մը

գտնելով, կաթողիկոս մը տեսնելով խաղալիկ Պարսից խաներու անդուծ վայրենութեան, ժողովուրդ մը տեսնելով Արարատայ ստորոտը աւար և գերի հարստահարութեանց՝ «Ահա կ'ըսէ, Նեստորական հերետիկոսաց ժողովուրդ մը՝ որ եօծ ուծ հարիւր տարուան գոյութիւն ունի, և իր անցեալին վրայ առասպելեալ խառնաշփոթ աւանդութիւններ » : Ինչչափ ուրիշ պատմական և աշխարհագրական գրքերու մէջ հանդպած եմ, Հայ պատմութեան համառօտութիւններ մանաւանդ կը յիշեմ, ուր դիւրացնող պատմիչ մը հին ազգի մը բոլոր պատմութիւնը քեզի կ'աւանդէ ըսելով թէ՛ Հայերը աս միջոցիս քանի մը թագաւորներ ունեցան Տիգրան Ա. Տիգրան Բ. Տիգրան Գ. և կ'անցնի : Արդէն պատմութիւնը ծանր ուսմունք մ'է, փիլիսոփայութեան ջահն է, և զարմանքով կը լսէ մարդ, անգղիացի երեւելի հեղինակի մը աս խօսքերը որ քաղաքականութեան վրայ խօսելով «Մինչեւ ութ եւ տասներորդ դարուն կէսը Գաղղիա պատմութեան գիրք մը չ'ունեցաւ » . Գաղղիա՝ որուն Մազարէնի երկրորդ գրքատան համար կարգացեր ենք թէ՛ մարդ մը հարիւր տարի օրը 12 ժամ կարդալով պատմական գրքերը չի կրնար հատցնել, Գաղղիա քաղաքականացեալ ազգաց մէջ առաջիններէն մէկը, հարիւր յիսուն տարի կայ ուրեմն որ պատմութիւն սկսած է ուսնիլ այո՛, և ի՛նչ զարմանք, երբ անգղիացի հեղինակը իր խօսքերուն ապացոյց մեծ մարդու մը, մեծ հանճարի մը ճարտասանութեան արժեւոյն պատմական աշխատութեանը մէջ նետելով, Պօսիւէի Տիեզերական պատմութիւնը « Տե-

սէք, կ'ըսէ, մեծ հանճարէ մը ելած խեղճ պատմութիւնը, ուր ազանդաւոր գրչէն ծագածը չունի բառ մը Մահմէտի համար, երբ աննշան թուրի Եպիսկոպոս, Ս. Մարգենի մը համար կը զըրուցէ՝ թէ իր համբաւը բոլոր աշխարհք տարածուեցաւ » : Այսպէս ահա տգիտութեան կը դատապարտէ կրօնամոլութիւնը զժողովուրդ մը, երբ իր ձեռքը մինչեւ պատմութեան վրայ կը ծանրանայ : Եւ մենք աղքատ ժողովուրդ, որ շատ կարեւոր գրքերու պակասութիւնը կը քաշենք, այս Պօսիւէի պատմութեան, ո՛չ մէկ, այլ երկու թարգմանութիւն ունինք : Ուստի ի՞նչ արդարութիւն, ի՞նչ տեղեկութիւն, ի՞նչ քաղաքականութիւն պէտք էր Հայ ազգին յուսալ այդ կրօնամոլութեան երեսփոխաններէն, որ իրենց բերած քաղաքականութեան նշխարհներն ալ թունաւորուած էին արհամարհութեան, ատելութեան ոգւով, որ կը բերէին Հայաստան և իր ձիրուցան զաւակաց : Պէտք էր ուրեմն, որ հասնէր փիլիսոփայութեան դարը, որ ծնունդ էր Գաղղիոյ յեղափոխութեան, որ իրօք քաղաքականութեան դայեակը եղաւ՝ նախապաշարմունքները փշրելով, և պատմիչներուն բերնէն դայլը կորզելով՝ որ ճշմարտութիւնը երեւան ելնէ կատարելապէս . և հալածեալ տպագրութեան ազատութիւնը ցամաք երկրի վրայ հաստատուի : Իրաւամբ կ'ըսէ Լամարթին . « Երբ նախախնամութիւնը կ'որոշէ ճշմարտութիւն մը ընդհանրացնել, և բոլոր մարդկութեան տարածել, գաղղիացւոյ մը ուղեղէն թափ կ'անցնէ զանի » (Մ-4) : Գաղղիապաշտ ըլլալ չէ փափաքս, այլ այնպիսի

ճշմարտութիւններ կան, որ անուրանալի են. իսկ քաղաքականութիւնը և ոչ մէկ ազգի մը ստացուածքը չէ, կլիմայի մը չի վերաբերիր, այսօր հոս է, վաղը հոն. ուր պարբարա հող մը կը գանէ՝ հոն կը բուսնի և սլատմութիւնը մեր ըսածին անուրանալի վկայն է :

Հայ ազգը այս եւրոպական մեծ յեղափոխութենէն մղեալ, քաղաքականութեան ցնցուղները չտեսած, թէպէտ ինկած ժողովուրդ, տպագրութեան օգուտը ճանչցեր էր. և Էջմիածնայ կաթողիկոսները մինչեւ Հոլանտայ Ռսկան վարդապետ մը դրկած էին Մամուլին, արդասիքը քաղելու. և Մխիթար վարդապետ և իր վենետից միաբանութիւնը քերականութիւն, բառարան, լեզուի մը հարկաւոր գործիքներ, ազգին սկսան հայթայթել. և քիչ մը ետքը հայրենի լեզուն, որ աղաւաղեալ վիճակի մտնել սկսած էր՝ իւր նախնի մաքրութեան վերածել. իրենց գրական աշխատութիւնքը, իրենց հին մատենադրաց տըպագրութիւնքը, իրենց թարգմանութիւնքը, և հեղինակութիւնք, որ ազգին լեզուին և մատենադրութեան ամեն ժամանակ արձան պիտի ըլլան, բաւական են ամեն տեսակ արդար կամ տնիրու ամբաստանութեանց դէմ զիրենք պաշտպանելու : իրենք եղան, որ օրագրութեան առաջին օրինակը տուին ազգին, Դիտակ Բիւզանդեան անունով թերթ մը հանելով, ան ատեն Եւրոպայի մէջ Նաբոլէոն իւր բարձրութեան վերջին կէտը հասած աշխարհք կը դղրդէր, նոյն Օրագրին հետ Արշարունեաց ընկերութիւն մը հաստատուած (գրքերու տպագրութեան) և դատախարա-

կութեան ծաւալման խորհուրդներ կը կազմեր ,
և ճառ մը կը յիշեմ Յ . Տ . ստորագրութեամբ
Յակոբ Տիւզ , որ ժամանակին համար շատ բարձր
ուսումնական անձ մը՝ կը գանգատի ազգին մէջ
մտած տգիտութեան , ազգատեցութեան , ազ-
գային լեզուին արհամարհութեան՝ և ոմանց Ծը-
ւանկանալու փափաքանաց դէմ :

Օրագիրը երկու երեք տարի կեանք ունեցաւ ,
և վերջը դադրեցաւ՝ հաւանական թէ ընթերցու-
ղաց քիչութեան պատճառաւ : Բայց ուսմանց
պէտքը սկսած էր ճանչցուիլ , և ան ատիճանի
հասած էր , որ քանի մը տարիներ վերջը Գում-
գափուի Մայր եկեղեցւոյ ուսումնարանին մէջ Յ .
Պէղճեան անուսումն , բայց զարմանալի սրամիտ
անձ մը , իտալական լեզուի դասախօսութիւն մը
կը հաստատէր , խաչատուր Պարտիզպանեան դա-
սատու հաստատելով :

Այս ժամանակներ նաեւ երկու անգամ փոր-
ձեր եղան ազգին կրօնական բաժանմունքը ան-
հետացնել , խորհուրդներ՝ սիրոյ հրաւերներէ ետ-
քը , բանսարկութիւն և կրօնամոլութիւն , աւելի
զօրաւոր գտնուելով՝ ատելութիւն և հալածանք
վրայ հասան , և հրաժարեալ Պօղոս Պատրիարք
որ միաբանութեան համար այնչափ աշխատէր էր ,
բայց երբէք խիստ միջոցներ չէր գործածած երբ
ծանր և խիստ որոշողութիւնը իրեն իմացուցին .
« հիմա ինձի կիմացնեն բայց խորհուրդ չեն հար-
ցընէր , ըսաւ , ես ալ կը զրուցեմ թէ հիմայ ազ-
գը իրօք բաժնեցին . անոնք առանձին Պատրի-
արք , եկեղեցի պիտի ունենան . օր մը միութեան
ճար մը եթէ կար , բողբոլին անհետ ըրին » : Թէ որ

այդ Պատրիարքին հանճարը վկայուած չըլլար, մի միայն աս խօսքերը և այս հեռատեսութիւնը բաւական չէին մեղի ապացուցանել իր մտաց կատարելութիւնը, և ուղիղ դատաստանը: Բայց կրօնամուկ կիրքերը ոչ երբեք լաւ խորհրդատու են, ամեն ազգաց պատմութեանց մէջ ամենէն սոսկալիները կրօնական պատերազմները եղած են. և հոս ալ պէտք էր, որ մէկ մօր զաւկներ իրար զրպարտէին և հալածէին, զօրաւորը՝ տկարը յաղթահարէր և ճնշէր, ինչպէս միշտ եղած է աշխարհիս վրայ: Բայց հետեւանքը ճիշդ այն եղաւ ինչ որ Պօղոս Պատրիարք գուշակեր էր, և հիմայ այսօր ազգասէր սրտերը, որ միութիւն կ'երազեն, կը տեսնեն որ աս զատուած տարրը առնել ի մի ձուլել անկարելի է, վասն զի ուսմունքը աս հրաշքը կրնայ ընել, բայց միթէ նախակրթական ուսմունքէն բարձր բան մը կարելի է առնել իջեցնել ժողովրդեան վարի յետին աստիճաններուն մէջ, որ բաւական չէ կրօնամուկութիւնը արմատախիլ ընել, անոր համար շատ է թէ որ սերտ միաւորութիւն (juxta-position) մը կարենանք ստեղծել և ես ասոր կը հաւատամ:

Ազգը որ բաժանմունքէ վախնալը կը ցըցնէր և բուռն միջոցներ ձեռք կ'առնուր, անոնք արգելելու համար չէր գիտեր թէ երկու տարի վերջը ուրիշ բաժանմունք մ'ալ իրեն պիտի հասնէր. վասն զի Ամերիկայէն Բաթթեսթանութիւնը ազգին դռները կը բաղխէր: Գժբազդութիւն մը համարինք այս ալ. ես երբ այս պատահարին հետաքրքրնին աչք մը կը նետեմ, շիտակը ինձ այնպէս կերեւայ թէ վնասէն աւելի օգուտ կար հոն:

Այս խօսքիս զարմացողներ կամ գայթաղողներ
դառնան ըսեն թէ ի՞նչ օգուտ բաժանման մէջ ,
ի՞նչ օգուտ հայրենի եկեղեցւոյն պառակտման
և արհամարհութեան մէջ , ի՞նչ օգուտ ընտանե-
կաց մը խռովութեան և ատելութեան մէջ :
Այո՛ ասոնք ամենքը խնդրոյն վիասակար կողմե-
րըն են , բայց ո՞վ չի տեսներ թէ այդ Ամերիկա-
յի դիտուն քարոզիչները առջի բերան հայերէն
սովորիւ և մաքուր ալ խօսելով , մեր լեզուն ոչ մի-
այն օտարաց , այլ նաեւ մեր ազգին չի դիւրա-
ցուցին , ո՞վ կրնայ ուրանալ որ քննաբանութիւնը
ըստ իրենց կրօնքին սովորութիւն , մեր մէջ չ'մտ-
ցուցին , և մեր վարդապետները որ Աւետարա-
նէն խօսելով այդ Սուրբ գրքին կողքը մեզի մի-
այն կը ցցնէին երբեմն , միթէ անկեց վերջը չէ՞ որ
պարտաւորեցան անոր մէջինն ալ քննել և մեզի
ցցնել : (Ծ՞՞) Այս քարոզիչները , որ սկիզբները
իրբեւ սուրբ կը համարուէին , բնական էր որ
մեծաւ մասամբ նոյն աստիճանաւ իրենց համար-
մունքը պիտի չի կարենային պահել իրենց աշա-
կերտաց առջեւն ալ նաեւ , վասն զի դաստիարա-
կութիւնը զմարդկային տկարութիւնը չափով մը
կ'ուզէ . բայց իրենց աշխարհաբար Աստուածա-
շունչը մեր գրաբար լեզուին համար ունեցած
հիւանդութիւնը քիչ մը բժշկեց : Եւ բաց ասկից
մեր խօսելու եղանակին և վարմունքին մէջ ա-
զատ կերպ մը մտածին , այսինքն՝ ազատ ազգի
մը զաւկներ ազատութեան լեզու և փոքրիկ հո-
գի մը մեզի հայթայթեցին : Կը յիշեմ գրքի մը
մէջ , որ երբեմն կարդացեր եմ , թէ Միացեալ
Պետութեանց Ամերիկացին կոչա չի դրուցելու հա-

մար, ամենէն խիստ կամ պարզն է իր լեզուին մէջ, անկից վերջը մարդավար է Անդղիացին, վերջը Գաղիացին, վերջը Իտալացին, վերջը Յոյնը, իսկ ամենէն շնորհալի անուշ և խոնարհ է Արաբացին իր աւազին վրայ և վրանին մէջ: Ուստի չենք սխալիր թէ որ Ամերիկացւոց ընտանութիւնը համարինք թէ մեր բնութիւնը և մեր բացատրութիւնները բարեխառնեցին թէ ըսենք: Չենք սըխալիր, երբ իրենց Պէպէքի դպրոցը երբեմն բաւական ուսմունք և Անդղիական լեզու ծաւալելու օգուտը ունեցաւ հայ ազգին՝ երբ ըսենք: Բայց չափով մը կրնանք համբերել երբ Մստըր Համլին Նիւ-Եօրքի լսարանի մը մէջ « Հայոց ազգը ստութեան և խարդախութեան վրայ երբ կը պարծի » կ'ըսէ. և կրնանք պատասխանել թէ ամեն վիճակ պատճառ մը ունի, և ամեն դիրք ըստ պարագային կրնայ արդարանալ: Բայց ո՞ր և իցէ կերպով չենք կրնար չի զգուիլ Մստըր Տուայտի ան դրքէն, որ Հայոց ազգը հեթանոս կ'անուանէ, ճիշդ և թերեւս աւելի ալ Եզուիթներու հոգին և խարէութիւնը իրեն բնութիւն ընելով: Բայց աս քարոզիչներուն ալ խթանը յայտնի է թէ շահն էր, պէտք էր իրենց ժողովրդոց չէ թէ ճշմարիտը զրուցէին, այլ իրենց շահուն օգտակարը. և անպէս ըրին իրենց հայրենակցած առջև: Իսկ երբ օրը եկաւ, ժամը հասաւ, իրենց որդեգրեալ Հայ ժողովրդեան վրայ իրենց տիրապետութիւնը մշտնջենաւորիլ սկսաւ, ան առտեն իրենց ազդեցութիւնն ալ տկարացաւ ինչպէս իրենց քարոզներուն արդատիքը, Բռօթէսութանութիւնը իւր սահմանները գտել էր, ինչպէս

1409 - 2007

կաթողիկոսութիւնը , բայց օգուտներ ալ բերած էր
և դարուս քաղաքականութեան ազդեցութիւնը
մեր վրայ չուրացուիր , թէ իրենք ալ գործիք մը
եղան :

(Դատարան) :

Ինչպէս որ քիչ մը առաջ կ'ըսէի , բարոյական
յառաջադիմութեան գլխաւոր գաղափարները
սկսեր էին տարածուիլ ազգին մէջ , և պէտքերը ի
գործ դրուիլ : Այս պէտքերը զգացող մարդ-
կանց ձեռօք էր , որ իւսկիւտար ճեմարան մը բաց-
ուեցաւ , և այս ճեմարանը որ ուսմունք և գի-
տութիւն պիտի տարածէր , մեծ խռովութեան
մը առիթ եղաւ ազգին մէջ : Մանաւանդ այն ա-
տեն , որ ժողովուրդը իր կարծիքը ուղղելու գոր-
ծիք նաեւ չունէր . վասն զի Պօլիս տպուած առա-
ջին լրագիրը դեռ չէր ելած Ազգարար Բիւզանդ-
եան , որուն խմբագիրը քիչ մը յառաջ հոս տե-
սայ : Փոխանակ լրագրի ժողովուրդը իր ճարտա-
րախօսները ունէր , որ սրճարաններու մէջ կը խօ-
սէին , կը վիճէին , կը վատահամբաւէին աս ան
անարդար կամ անիրաւ , ծախքի՝ եկամուտի գու-
մարներ կընէին , առանց ճշգրութեան հաշուի մը
պարտաւորութեամբ և երբ խօսքը բաւական
չէր , ձեռագիր ոտանաւորներ կը հանէին լի այն-
պիտի խայտառակութեամբ , որ ետեւէն հասնող
անճոռնի լրագիրներ ոչ երբէք կրցեր էին ա-
նոնց այս մասին հաւասարիլ , վասն զի հայհոյու-
թիւն միայն կար իսկ իմաստ ամենեւին , և ան
գրութիւնները ժամանակին կարողութեան չափը
կը ցրցնեն , ինչպէս արդի լրագրութիւնը որ մը
ժամանակին չափը պիտի ցրցնէ , և Սահմանագ-

բութիւնը, որ չափ մը չէ դրած տպագրութեան՝
և կատարեալ ազատութիւն տուեր է, շատ լաւ
ըրեր է, որպէս զի օր մը պատմութիւնը կարե-
նայ ազգին կարողութեան և յառաջադիմու-
թեան քայլերը չափել ըստ ժամանակին: Իսկ աս
վէճերէն թէ որ իրօք մնաս քաջող մը կար, ու-
սումնասէր պատանեկութիւնն էր. հազիւ թէ
ուսման ճաշակը առած դռները գոցուեցան և
ուսողներ հոս հոն ցրուեցան, ով որ յաջողեցաւ
և կրցաւ իր ուսմունքը շարունակեց, և քանի մը
լեզուագէտ և ուսումնական անձինք ալ տեսնը-
ւեցան, որ ետքը ազգին մէջ փայլուն գիրքեր
ալ ունեցան: Աս ճեմարանին կոիւնները կը ցցնէ-
ին թէ ազգը թէպէտ ներքին կառավարութիւն
մը ունէր, բայց այդ կառավարութիւնը բաւա-
կան ժողովրդական չէր, որ իր ազգին սիրելի ըլ-
լար և բարոյական ազգեցութիւն մը ունենար.
բաւական զօրաւոր չէր որ իր ազգեցութիւնը
հնազանդութիւն գտնէր, ուստի աս տարտամ
վիճակը, դարմանի մը պէտք ունէր, բայց այդ
դարմանին և ոչ անունը գիտէր ժողովուրդը և
ոչ դադափար ունէր: Բայց ան հոգին թէ ազգը
պէտք է ինքզինքը կառավարել, թէ ինք եթէ
ստակ կուտայ իրաւունք մը ունի փնտռելու ի-
մացուեր էր, քսանը չորս հոգիներու ընտրու-
թիւն մը արդէն ան ատեն երեւցած և անյայտ
եղած էր հալածանաց և աքսորանաց մէջ, և
խաղաղութիւնը՝ այսինքն լռութիւնը երբ տիրեց
քննարանութեան հոգին մնաց և քննարանու-
թիւնը յառաջադիմութեան գործիքներուն մէկն է:
Նոյն ճեմարանին բացուելէն առաջ, ազգին

կաթովիկ մասին մէջ, ուսմանց յառաջագիւմութեան ընդդ մը կը ծագէր Հնդկաստանէն Մուրատայ և Ռափայելի կտակներովը, որ վենետիկոյ Մխիթարեանց կը յանձնէին դպրոցներուն կառավարութիւնը: Ասոնց պատմութիւնը տեղեկութիւն փնտռողներուն համար կայ միջոց իրենց փափաքը լեցնելու, ես գլխաւոր մէկ գիտողութիւն մը ունիմ ընելու, ան հարցմունքին թէ այս կտակներուն վայելմունքը ազգին ընդհանրութեան միթէ չէր պատկաներ: Թէ որ արդարութիւնը պահանջէ որ այս դպրոցները ազգին մէկ փոքր մասին չի վերաբերին, իբր այնպէս կը ցըցնէ թէ ազգութեան օգտակար ասոնց բոլորովին այն մասին յատկանալը եղաւ, որպէս զի ազգին համար անոնց զաւկները չի կորսուին, արդէն այս ժողովուրդը կրօնական կապերը ազգին ընդհանուր եկեղեցւոյն հետ խզած, լեզուին հետ ալ խզելու պատրաստականութիւն ունենալով հին անցեալը ամենեւին չ'գիտնալով, իր ծագումը ոչ թէ փնտռելու այլ մոռնալու և չի տեսնելու փափաք ունենալով, (որուն մեծ մասին վրայ ըսածներս դեռ յայտնի կերեւան) կորուստ մ'էր ազգին համար նիւթական և բարոյական, աս դպրոցները Մխիթարեանց ազգային դաստիարակութեամբ այս չարեաց առջեւ առին, և որ մը մանր տղաք տղետք մայրենի լեզուին և աւանդական պատմութեան, վենետիկ, Ռատուայ և փարիզ երթալով, և քանի մը տարիներէ վերջը դառնալով իրենց տունները չափահաս պատանիներ ազգային լեզուին հետ ազգութեան գաղափարը՝ դաստիարակութեան կարեւորութիւնը, և

ընկերութեանց պէտքը կը մտցնէին : Եւ այս երիտասարդաց իրենց տան մէջ ներկայութիւնը կը խափանէր ան կրօնամոլ ազդեցութիւնը, զոր կը դործածէին նոյն ժամանակ նոյն ժողովրդեան մէջ տգետ վարդապետաց խումբ մը որ, ոչ միայն խոստովանահայր՝ այլ ուսուցիչ, գատաւոր և իշխան դարձած էին : Աս խօսքերը երբ կը զըրուցեմ, կուզեմ որ գիտնան ամենքը, որ ես ան եկեղեցականաց խիստ դատաւոր մը չեմ ուզեր ըլլալ, որ իրենց պաշտօնը Քրիստոնէական կրօնից պահանջմանց հետ կը համաձայնեցնեն, Աստուծոյ մարդը երբ իր սուրբ պաշտօնը կը կատարէ, յօգուտ կրօնից և ժողովրդեան, իմ աչքիս սուրբ և անգին էակ մ'է, իմ խօսքս անոնց համար է որ կրօնքը զէնք մը առած արդար և աղնուական դաղափարներ սպաննել կը ջանան ժողովրդոց սրտին մէջ : Նոյնը պէտք է իմանալ նաեւ իմ քիչ մը առաջ աւետարանի կողքին համար զրուցածներս որ ոմանք գայթակղեցուցեր է, իմ խօսքերս, անոնց համար էր որ դժբաղդաբար իրենց տգիտութեամբ, ոչ գիրքը կը հասկընային և ոչ ժողովրդեան արդարապէս բացատրել գիտէին : Ուստի ըսածներուս վրայ ետ առնելու բան մը չունենալով կը շարունակեմ խօսքս) : Այս ազդեցութեան կոտորիլը, որ կը վիրաւորէր գաս մը մարդկան որ կրօնամոլութիւնն և խաբէութիւնն վերարկու ըրած էին իրենց, մանաւանդ մարդ մը, որ իրենց պարագլուխն էր Հասուն Գերապայծառ, նրբ տեսան աս վիճակը և տեսան նաեւ, որ Համազգեաց ընկերութիւն մը կեցէր որ խօսքերէ ի դործ կը դիմէր, ամբաստանու-

Թիւնք զրպարտութիւն չի մնաց որ չի տեղային
Թէ Հռոմ և Թէ ի Բ. Դուռը, և Թէ ժողովրդեան
մէջ անխիղճ գրքերու հրատարակութեամբ : Եւ
Համազգեաց ընկերութիւնը, որ այս հարուածներ
ըէն պէտք էր կործանիլ, չի կործանեցաւ մանա-
ւանդ Թէ աւելի ուժ առաւ, և այս հակառակու-
թիւնը զինքը աւելի երկայն ապրեցուց քան Թէ
լինչ որ իր խարխուլ հիմունքը իրեն կը խօստա-
նային :

Եւրոպական քաղաքականութեան արդիւն-
քը, որ Հայ ազգին վրայ ազդեցութիւն կ'ընէր,
և գանդաղ յառաջագիմութիւն կը ցուցնէր՝
միայն Պօլիս էր և Զմիւռնիա, ուր երկու սե-
ռէն գպրոց հաստատուելով, իրենց եկամուտներ
բովը, և Օրագիր մ'ալ պէտք էր, որ աւելի զգա-
լի, աւելի փայլուն յառաջագիմութիւն մը ցցնէին :
Բայց հոն ալ ուր սրամիտ ժողովուրդ մը կայ և
որ Եւրոպայի հետ գիւրին և ուղղակի հաղոր-
դակցութիւն ունի, մարդկային բնաւորութեան
բնածին պակասութիւնք՝ մանաւանդ ան մասը,
որ ամեն տեղ անցեալին անբաժան կը կապուի
և չուզէր հեռանալ իրենց մէջ ալ շարունակ տա-
րածայնութեանց առիթ տալով, իրաւ նշանաւոր
մարդիկ հանեցին, բայց ինչ որ ազգը իրենց-
մէ իրաւունք ունէր յուսալու ան չի տուին : Եւ
երբ Պօլիս և Զմիւռնիա հազիւ քայլ մը յառաջ
քայլ մը ետ կը քալէին, Հայաստանի ներքին
գաւառները յառաջագիմութիւն սպասել անօ-
գուտ էր : Ռուսիոյ մէջ լազարեանց ճեմարանը
ռուսական Հայոց համար կը խոստանար, բայց ամեն
բան՝ ամեն տեղ նոր էր ազգային, և հիմնար-


կութիւնն ապագային կը խոստանար, և ներկայն երեւցող ժողովուրդը, և իր առաջնորդները, և մեծամեծները, ազգին մտաւորականին չէին օգներ, թէ որ արգելք չէին ըլլար: Ժամանակին պէտք էր որ դաստիարակութիւնն առնող տղաքը հասնէին, որպէս զի զանազան քաղաքներ դպրոց՝ օրագիր կարենային հիմնել, գրութիւններ հանել, որ գերմանական լուրջ և կորովի դաստիարակութեան արդիւնք ճանչցուէին:


Անկարելի է Ռուսիոյ Հայուն վրայ երկու բառ զրուցել և էջմիածին չի յիշել: Բայց կան ժամանակներ որ երբ պատմութեան վրայ ակնարկ մը կ'ընէ մարդ՝ լաւ է չի տեսնելու զարնէ, կան վիճակներ որոնք լուութեամբ անցնիլ աւելի աղէկ է քան թէ առիթ տալ, որ իւրաքանչիւր ոք ըստ իր քմաց կամ ճաշակին խօսք մը՝ ճշմարտութիւն մը՝ շողոքորթութիւն կամ արհամարհութիւն համարի, ես՝ որ երկուքէն ալ հեռի ըլլալ կը փափաքիմ, կը յորդորեմ հետաքրքիր եղողները աչք մը նետել Պէրպլերեան Պատուելիին պատմութեան մէջ, աս դարուս սկիզբը կատարողիկոսութեան աթոռին վրայ և տեսնել թէ ինչպէս օրինաւորութիւնը կը բռնաբարուէր, յափըշտակութիւնը ընդդէմ՝ ամենայն քրիստոնէական կարգաւորութեանց՝ կը յաջողէր, և անպատիժ կը յանդգնէր. և ան վիճակը՝ արդի վիճակին հետ առանց կրից բաղդատողները միայն կրնան լաւ զուգակշռել և դատել, թէ յառաջագիւտութիւնը՝ թէ բարեկարգութիւնը և թէ պահանջող ոգիներուն տարապայմանութիւնը:


Պէտք չէ առանց դիտողութեան անցնիլ մեծ

կաթողիկոսի մը և Ներսիսեան դպրոցին ազգե-
ցութիւնը թիֆլիզ քաղքին վրայ, ուր երեսուն
տարի առաջ հազիւ թէ քանի մը հոգի Հայերէն
կրնային խօսիլ, իսկ հիմայ սովորութիւն դար-
ձած է օտար վրացի լեզուն թողուլ և ազգայինը
գործածել. աս միայն բաւական յառաջադիմու-
թեան համար նշմար կրնայ համարուիլ վրաս-
տանի Հայուն համար :

Այս իրիկուն այսչափ խօսելով, կը հասնիմ
Սահմանադրութեան հաստատութեան, և նոյն
միջոցին ուր բարեգործական Ընկերութեան մը
հիմնարկութիւն եղաւ և որոց վրայ խորհրդա-
ծել, թէ որ յաջողի՝ ուրիշ նիստի մը մեր խօ-
սակցութեան նիւթ կ'ընենք :







9/16 1 712.

ԳԻՆ 100 ՓԱՐՍԵ



